



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

342

— 23

01 MAR 2001

05 FEB 2001

75

342
L-23

Ֆ. ԼԱՍՍԱԼ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԷՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թարգմ. սուս. Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

5 Կ.

5-րդ. — հարար

1906
Թ Ի Ֆ Լ Ի Ս

30 APR 2019

Ք. ԼԱՍՍԱԼ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

A. Brikian
→

Պարոններ.

Ես հրաւեր եմ ստացել ճառ արտասանելու այս յարգելի ժողովում և ընտրել եմ մի նիւթ, որը իր այժմէութեան շնորհիւ ըստ ինքեան պէտք է գրաւի ձեր ուշադրութիւնը: Ես պէտք է խօսեմ սահմանադրութեան էութեան մասին:

Պարոններ, առաջուց ասեմ, որ իմ ճառը պէտք է խիստ գիտական լինի: Այնուամենայնիւ, կամ աւելի ճիշտ, հէնց դրա համար էլ ձեզանից ամեն մէկը հնարաւորութիւն կունենայ հետեւելու այդ ճառին սկզբից մինչև վերջը և կատարելապէս հասկանալ նրան:

Իսկական գիտականութիւնը, պարոններ, դրա մասին չէ խանդարում մի աւելորդ անգամ էլ յիշեցնելու, կայանում է ոչ այլ ինչում, եթէ ոչ մտքի այն պարզութեան մէջ, որը առաջուց ոչ մի բան չենթադրելով, քայլ առ քայլ բղխում է հէնց ինքն իրենից և հէնց դրա համար էլ անպարտելի ոյժով գրաւում է իւրաքանչիւր ուշադիր ունկնդրի խելքը:

Մտքի այդ պարզութիւնը կարիք չի զգում ունկընդիրների կանխակալ որևէ համոզմունքների: Ընդհակառակը, ինչպէս ես ասացի, այդ պարզութիւնը կայանում է ոչ այլ ինչում, եթէ ոչ ամեն մի կանխակալ ենթադրութեան և նախապաշարմունքի բացակայութեան մէջ, ամեն բան իրենից է դուրս բերում և չէ կարողանում տանել կանխակալ համոզմունքներ. ոչ, ունկընդիրները առարկան պէտք է նորից այնպէս ուսումնասիրեն և իբր թէ նրանք դրա մասին ոչ մի որոշ կարծիք չեն ունեցել, իբր թէ նրանք նոյն իսկ այդ առարկայի մասին յաճախ չեն խորհել ու մտածել: Այդպիսով, նրանք թէկուզ հէնց միայն ու-



41471-63

12749

սունասիրութեան ժամանակ, պէտք է հեռանան առարկայի մասին կազմած իրանց այն սովորական հասկացողութիւնից, որին նրանք արդէն ընտելացել են:

Ուրեմն ես սկսում եմ իմ ճառը հետևեալ հարցով. ի՞նչ է սահմանադրութիւնը և ինչո՞ւն է նրա էութիւնը:

Այժմ, պարոններ, վաղ առաւօտից մինչև ուշ գիշերը ամենքն էլ վիճում են սահմանադրութեան մասին: Բոլոր լրագրներում, բոլոր ընկերութիւններում, բոլոր պանդոկներում միայն սահմանադրութեան մասին են խօսում: Սակայն չնայելով դրան, ի՞թէ հարցը լուրջ գննք, թէ ինչո՞ւն է կայանում սահմանադրութեան էութիւնը և թէ ի՞նչ հասկացողութիւն է այդ, այն ժամանակ բոլորովին վախենում եմ, որ այդպիսի խօսակցութիւններով զբաղւած պարոններից շատ քչերը ընդունակ կլինեն հարցին դոհացուցիչ պատասխան տալու:

Շատերը այդ հարցի ժամանակ կարիք են զգում 1850 թ. պրուսական օրէնքների ժողովածուի հատորը ձեռք բերել և նրանով ծանօթանալ պրուսական սահմանադրութեան հետ:

Բայց դուք իսկոյն կատնէք, որ դա իմ հարցի պատասխանը չէ: Ախր չէ՞ որ այդ հատորի մէջ ամփոփւած է միայն մի որոշ՝ այն է պրուսական սահմանադրութեան առանձնայատուկ բովանդակութիւնը, հետևապէս և դա չէ կարող պատասխանել այն հարցին, թէ ինչո՞ւն է կայանում սահմանադրութեան էութիւնը ընդհանրապէս և թէ դա ի՞նչ գաղափար է առհասարակ:

Եթէ այդ հարցը ես տամ իրաւաբանին, նա ինձ իբրև պատասխան, կասի, թէ «սահմանադրութիւնը այն պայմանագիրն է, որ երդումով կապւում է թագաւորի և ժողովրդի մէջ, պայմանագիր՝ որ սահմանում է երկրի օրէնսդրութեան և կառավարութեան հիմնական սկզբունքները»: Կամ, քրտով հետևեալ կան և հասարակապետական սահմանադրութիւններ, իրաւա-



21842-59

բանը աւելի ընդհանուր որոշումն կտայ. «Սահմանադրութիւնը մի երկրում յայտարարւած այն հիմնական օրէնքն է, որ սահմանում է որևէ ազգի մէջ հրապարակական իրաւունքի կազմակերպութիւնը»: Բայց այդ բոլորը և դրանց ձևական իրաւաբանական որոշումները նոյնքան հեռու են իմ հարցի իսկական պատասխանից, որքան և նախկին պատասխանը: Դրանք բոլորը ներկայացնում են իբրև արտաքին նկարագրութիւն այն բանի, թէ ինչպէս է կազմւում սահմանադրութիւնը և ինչ է անում նա, չբացատրելով սակայն, թէ ինչ է սահմանադրութիւնը: Դրանք միայն կրիտերիաներ՝ նշաններ են տալիս, որոնց շնորհիւ կարելի է արտաքին և իրաւաբանական ձևով ճանաչել սահմանադրութիւնը: Դրանք բոլորն էլ մեզ չեն ասում, թէ ինչո՞ւն է կայանում սահմանադրութեան գաղափարը և էութիւնը: Դրա համար էլ այդ բոլոր պատասխանները մեզ կատարեալ անգիտութեան մէջ են թողնում այն բանի նկատմամբ, թէ լաւ կամ վատ, հնարաւոր թէ անհնարին, հաստատուն թէ անհաստատ է որևէ սահմանադրութիւն: Այդ բոլոր բաների մասին մենք կարող ենք դատել միայն այն ժամանակ, երբ ընդհանրապէս գիտենք սահմանադրութեան էութիւնը: Միայն այն ժամանակ մենք կարող էինք վճռել, թէ արդեօք համապատասխանում է որևէ սահմանադրութիւն այդ էութեանը և կամ թէ չէ, ի՞նչպիսի յարաբերութիւն ունի նա դէպի նրան: Բայց այդ էութիւնը մեզ բոլորովին չեն բացատրում այդօրինակ իրաւաբանական արտաքին որոշումները երբէք չեն որոշում սահմանադրութեան էութիւնը, որոշումներ՝ որոնք միևնոյն ձևով կարելի է վերագրել ամեն մի թղթի կտորին, որ ստորագրել է ազգը և նրա թագաւորը և որը կոչւում է սահմանադրութիւն, ինչ էլ որ լինի նրա բովանդակութիւնը: Սահմանադրութեան գաղափարն է միայն ծառայում իբրև ազգի սահմանադրական ամբողջ արուեստի և ամբողջ իմաստութեան, որոնք իրանք իրենցից են բղխում, և դուք ինքներդ կհամոզ-

ւէք այդ բանում, երբ մենք կմօտենանք այդ գաղափարին:

Ուրեմն ես կրկին հարց եմ տալիս. ի՞նչ է սահմանադրութիւնը, ինչո՞ւն է նրա էութիւնը և ինչո՞ւն է այդ գաղափարի միտքը:

Մենք այդ դեռ ևս չգիտենք, մենք դեռ պէտք է գտնենք պատասխանը: Փնտռենք այդ բանը միասին:

Որպէս զի պատասխանը գտնենք, դիմենք այն մեթոդին, որին միշտ պէտք է դիմել, երբ ցանկանում ես որևէ առարկայի մասին պարզ գաղափար կազմել: Այդ մեթոդը շատ հասարակ է, պարոններ: Նա կայանում է նրանում, որ որոշելի առարկան մենք համեմատում ենք մի ուրիշ՝ նոյնանման առարկայի հետ և աշխատում ենք, որքան կարելի է, աւելի պարզ և աւելի ճիշտ ըմբռնել այն տարբերութիւնները, որոնցով նրանք, յամենայն դէպս, դանազանուում են միմեանցից:

Ահա իմ մեթոդը և ես այժմ հարց եմ տալիս, թէ ի՞նչ տարբերութիւն կայ սահմանադրութեան և օրէնքի մէջ:

Սահմանադրութիւն և օրէնք ըստ էութեան, ակնյայտնի է, նոյն բաներն են: Սահմանադրութիւնը պէտք է օրէնքի ոյժ ունենայ, հետևապէս նա պէտք է միևնոյն ժամանակ և օրէնք լինի: Բայց սահմանադրութիւնը պէտք է ոչ միայն օրէնք լինի, այլ մի քիչ էլ աւելի, քան օրէնքն է, հետևապէս և այդտեղ է երկուսի տարբերութիւնը: Հարիւրաւոր փաստեր ապացուցանում են, որ ճիշտ որ գոյութիւն ունի այն տարբերութիւնը, պէտք է ոչ միայն օրէնք լինի, այլ մի բան և որ սահմանադրութիւնն էլ աւելի, քան օրէնքն է:

Օրինակի համար դուք վատ բան չէք տեսնում այն բանի մէջ, երբ նոր օրէնքներ են հրատարակում: Ընդհակառակը, դուք արդէն զիտէք, որ անհրաժեշտ է, որ գրեթէ ամեն տարի հրատարակեն շատ կամ քիչ թւով նոր օրէնքներ: Սակայն չէ կարելի հրատարակել որևէ նոր օրէնք, չփոխելով դրանով գոյութիւն ունեցող օրինական յարաբերութիւնները: Այն

նոր օրէնքը, որ ոչ մի փոփոխութիւն չէ մտցնում գոյութիւն ունեցող օրէնքի կազմի մէջ, բոլորովին անմիտ և աւելորդ կլինէր և ամենեին չէր հրատարակել: Հետևապէս դուք ոչ մի վատ բան չէք տեսնում օրէնքների փոփոխութեան մէջ, այլ ընդհակառակը, այդ բանը դուք համարում էք մի նորձալ (ընական) փունկցիա կառավարչական հիմնարկութիւնների կողմից: Բայց թող մի տեղից շարժեն սահմանադրութիւնը, այն ժամանակ դուք բարկանում և զայրանում էք, ասելով, որ դա դաւաճանութիւն է մեր սահմանադրութեան վերաբերմամբ: Ո՞րտեղից ծագեց այդպիսի մի տարբերութիւն: Այդ տարբերութիւնը այնքան անհրեքելի է, որ նոյն իսկ մի քանի սահմանադրութիւններում օրէնսդրական ճանապարհով ուղղակի սահմանած է, որ սահմանադրութիւնը բոլորովին չէ կարելի փոխել. մի քանի ուրիշ սահմանադրութիւններում էլ պարզապէս ասւած է, որ դրանք կարող են փոխել օրէնսդիր ժողովի ձայների երկու երրորդականով և ոչ թէ հասարակ մեծամասնութեամբ, երրորդ տեսակի սահմանադրութիւնների մէջ էլ ասւած է, որ օրէնսդիր ժողովը նոյն իսկ կառավարչական ուրիշ իշխանութիւնների հետ միասին չէ կարող փոխոխութիւններ անել սահմանադրութեան մէջ, և եթէ այդպիսի փոփոխութիւն ենթադրուում է, այդ դէպքում երկիրը պէտք է ընտրի յատուկ ad hoc ներկայացուցիչների նոր ժողով այդ հարցի վճռման համար:

Այդ բոլոր փաստերը մեզ պարզ ցոյց են տալիս սահմանադրութեան մասին բոլոր ժողովուրդների ունեցած ընդհանուր հասկացողութիւնը. այդ հասկացողութիւնը աւելի սուրբ, հաստատուն և անփոփոխ է, քան սովորական օրէնքը:

Այդպիսով ես նորից դառնում եմ իմ նախկին հարցին. ինչո՞ւ է տարբերում սահմանադրութիւնը սովորական օրէնքից:

Այդ հարցին սովորաբար այսպէս են պատասխանում. սահմանադրութիւնը ոչ թէ պարզ օրէնք է,

նման ամեն մի օրէնքի, այլ երկրի հիմնական օրէնքը: Շատ կարելի է, պարոններ, որ հէնց այդ պատասխանի մէջ, ոչ պարզ ձևով թագնւած է ճշմարտութիւնը: Բայց ձեռ դեռ այնպէս պարզ չէ, և այդպիսի ձևով պատասխանը ոչ մի բանի պէտք չէ: Չէ որ իսկոյն ծագում է մի ուրիշ հարց. ուրեմն ինչպիսի տարբերութիւն կայ օրէնքի և հիմնական օրէնքի մէջ: Նշանակում է, որ մենք մի քայլ անգամ առաջ չգնացինք: Բանից դուրս եկաւ, որ մենք այժմ մի նոր անուն ունենք— «հիմնական օրէնք». բայց այդ անունը մեզ ոչնչով չի օգնիլ, մինչև որ մենք չիմանանք, թէ ինչ տարբերութիւն կայ հիմնական օրէնքի և ամեն մի ուրիշ օրէնքի մէջ:

Փորձենք, թէ արդեօք չենք մօտենալ մեր նպատակին, եթէ վերլուծենք թէ առհասարակ որպիսի հասկացողութիւններ են պարունակում «հիմնական օրէնք» անւան մէջ, ուրիշ խօսքով, թէ հիմնական օրէնքը ինչո՞վ պէտք է տարբերուի ուրիշ օրէնքից, որպէս զի արդարացի իր՝ «հիմնական օրէնքի» անունը:

Հետևապէս հիմնական օրէնքը պէտք է լինի.

ա) Աւելի խոր օրէնք, քան սովորական օրէնքն է. այդ բանի վրայ մատնացոյց է անում «հիմնական» անունը, բայց նա:

բ) Երև հիմնական օրէնք, պէտք է նաև լինի հիմք միւս օրէնքների. դա նշանակում է, որ հիմնական օրէնքը պէտք է անընդհատ արտայայտի և ուրիշ սովորական օրէնքներում, կազմելով նրանց հիմքը, հետևապէս հիմնական օրէնքը պէտք է գործի և բոլոր միւս սովորական օրէնքներում:

գ) Բայց այն բանը, որ ունի հիմք, չէ կարող քէֆը ուզածի պէս այսպէս կամ այնպէս լինել. նա պէտք է հէնց այնպէս լինի, ինչպէս որ կայ: Հիմքը չէ կարող է հաշուել փոփոխութիւնների հետ: Միայն այն բանը, որը հիմք չունի, կամ միայն պատահական բանը կարող է ոչ միայն այսպէս, այլ և ուրիշ տեսակ լինել: Ընդհակառակը այն բոլորը, որ ունի հիմք, ան-

հրաժեշտ է, որ այնպէս լինի, ինչպէս որ կայ: Օրինակի համար մոլորակները մի որոշ ուղղութեամբ են շարժւում: Այդ շարժումը կամ որոշում է որևէ հիմնական պատճառով, կամ ոչ մի բանի վրայ չէ հիմնւած: Վերջին դէպքում այդ շարժումը պատահական է և կարող է ամեն մի ըստէ ուրիշ տեսակ էլ լինել: Իսկ եթէ նա հիմք ունի, բնագէտների խօսքերով այդ հիմքը արեգակի ձգողական ոյժն է, այն ժամանակ արդէն յայտնի է, որ արեգակի ձգողական ոյժով, իբրև հիմք, որոշում և կարգաւորում է այդ շարժումը այնպէս, որ չէ կարող ուրիշ տեսակ լինել, քան թէ կայ:

Հետևապէս հիմք հասկացողութեան մէջ կայանում է իրական անհրաժեշտութեան միտքը, այնպիսի գործող ոյժ, որը անհրաժեշտօրէն դարձնում է իր հիմնած մարմինը այնպէս, ինչպէս որ իրականութեան մէջ կայ:

Այսպիսով, եթէ սահմանադրութիւնը կազմում է երկրի հիմնական օրէնքը, ուրեմն նա մի այնպիսի բան է, որ մենք պէտք է աւելի մանրամասն որոշենք, կամ, ինչպէս մենք առ այժմ գտանք, նա մեր գործող ոյժն է, որը երկրում միւս բոլոր օրէնքները և իրաւական հաստատութիւնները անհրաժեշտաբար դարձնում է այն, ինչ որ նրանք իրականութեան մէջ են, այնպէս որ այդ ժամանակից սկսած երկրում չեն կարող հրատարակել ուրիշ օրէնքներ, բացի դրանցից: Այստեղ, պարոններ, մեր առաջ փայլում է լոյսի առաջին ճառագայթը, որը ցրում է խաւարը:

Բայց, պարոններ, կոյ արդեօք երկրում մի այնպիսի բան, այս հարցի ժամանակ խաւարը հետզհետե ցրւում և վերջնականապէս անյայտանում է, կոյ արդեօք երկրում մի այնպիսի առաջնորդող գործող ոյժ, որը այնպէս ազդէր հրատարակող բոլոր օրէնքների վրայ, որպէսզի նրանք իբանց էութեամբ անհրաժեշտաբար լինէին այն, ինչ որ են:

Օ՛հ, իհարկէ, պարոններ, այդպիսի մի բան կայ

և այդ բանը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ուրեւ ե հասարակութեան ոյժերի բեալական փոխադարձ յարաբերութիւնները:

Իւրաքանչիւր հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող ոյժերի բնալական փոխադարձ յարաբերութիւնն է հէնց այն ակտիւ գործող պատճառը, որ որոշում է այդ հասարակութեան բոլոր օրէնքները և իրաւական հիմնարկութիւնները այնպէս, որ նրանք իրանց էական գծերով չեն կարող ուրիշ տեսակ լինել, քան ինչպէս գոյութիւն ունին իրականութեան մէջ:

Շտապում եմ այդ բանը պարզաբանել մի շոշափելի (կոնկրետ) օրինակով: Այն ձևով, ինչ ձևով ես եմ երեակայում նրան, իհարկէ, բոլորովին անհրաժեշտ է: Բայց, չլսօսելով արդէն այն բանի մասին, ինչ որ յետոյ մենք գուցէ կտեսնենք, կհամոզենք, որ ուրիշ ձևով նա բոլորովին հնարաւոր է. բայց բանը նրանում չէ, թէ արդեօք կարող է մի այդպիսի բան պատահել, այլ միայն նրանում, որ այդ օրինակով ուսումնասիրենք իրերի բնութիւնը, որը կարող էր երեւան զալ, եթէ նա իրականանար:

Պարոններ, ձեզ յայտնի է, որ Պրուսիայում օրէնքի ոյժ ունի միայն այն, ինչ որ հրատարակւած է օրէնքների ժողովածուի մէջ: Օրէնքների ժողովածուն սպւում է Դիկէրի արքունական նշանաւոր տպարանում: Այդ օրէնքների բնագրները պահւում են տէրուական որոշ արխիւներում, իսկ օրէնքների տպագրւած ժողովածուները ուրիշ արխիւներում, գրադարաններում և պահեստներում:

Ենթադրենք, որ պատահում է մի այնպիսի սարսափելի հրդէն, որպիսին Համբուրգում պատահեց և որ այդ հրդէնի ժամանակ այրւում են բոլոր այդ տէրուական արխիւները, գրադարանները, պահեստները և Դիկերի արքունական տպարանը. ենթադրենք, որ հանգամանքների տարօրինակ պատահմունքով միևնոյն հրդէնը տեղի է ունենում և միապետութեան միւս քաղաքներում, որ այրւում են մինչև

անգամ մասնաւոր գրադարանները, որտեղ կային օրէնքների ժողովածուներ, այնպէս որ ամբողջ Պրուսիայում հաւաստի ձևով և ոչ մի օրէնք չէ մնում:

Այդպիսով երկիրը կգրկէր իր բոլոր օրէնքներից և այդ երկրին ուրիշ բան չէր մնալ անելու, եթէ ոչ դիմելու նոր օրէնքներ կազմելուն:

Այժմ, պարոններ, ի՞նչ էք կարծում: Կարելի՞ կլինէր այդ դէպքում կամայականութեամբ նոր օրէնքներ ստեղծել, ով ինչ ցանկանար: Տեսնենք:

Ենթադրենք թէ դուք կասէիք օրէնքները ոչնչացել են, նոր օրէնքներ կազմենք և դրանով թագաւորական իշխանութեանը չտանք այն դիրքը, ինչ որ նա մինչև այդ ժամանակը ունէր կամ նոյն իսկ բոլորովին զրկենք նրան այդ իշխանութիւնից:

Թագաւորը դրան ամենայն հանգստութեամբ կը պատասխանէր, որ օրէնքները ոչնչացան, բայց դրանից ի՞նչ է հետևում: Զօրքը իրականապէս ինձ է հպատակւում. նա գնում է այնտեղ, որտեղ ես եմ պատուիրում. իրականապէս զինանոցների և զօրանոցների հրամանատարները իմ հրամանով կտան թնդանօթներ և արտիլերիան նրանց հետ կշարժւի դէպի փողոց. հիմնւելով այդ իրական ոյժի վրայ, ես չեմ համբերիլ, որ դուք դաւաճանէիք այն դիրքին, ինչ որ ես ունեմ:

Պարոններ, դուք արդէն տեսնում էք, որ քաղաւոր, որին հպատակւում են զօրքերն և թնդանօթները, սահմանադրութեան մի մասն է կազմում:

Կամ, ենթադրենք, դուք կասէիք, որ մենք 18 միլիօն պրուսացիներ ենք: Այդ 18 միլիօն պրուսացիների մէջ խոշոր ազնւական կալուածատէրները մի աննշան մասն են կազմում: Մենք չենք հասկանում, թէ ինչո՞ւ ազնւականների այդ աննշան մասն էլ պէտք է նոյն ազդեցութիւնը ունենայ, որքան բոլոր 18 միլիօն բնակիչները. նրանք կազմում են ազնուականների պալատ և քննում են ամբողջ ազգից ընտրւած պատգամաւորների վճիռները և մերժում են այդ վճիռներից նրանք, որոնք իրանց մէջ

որև է գործնական բան են պարունակում: Ենթադրենք որ դուք ուրիշ տեսակ կպատճառաբանէիք և կասէիք. մենք բոլորս «ազնուականներ» ենք և չենք ցանկանում ազնուականների առանձին ժողով:

Կասկած չկայ, իհարկէ, որ խոշոր ազնուական կալւածատէրները չէին կարող իրանց գիւղացիներին ձեր դէմ դուրս բերել: Ընդհակառակը, նրանք ամենայն հաւանականութեամբ լուրջ միջոցների կիրմէին իրանց գիւղացիներին բարկութիւնից իրանց ազատելու:

Բայց խոշոր ազնուական կալւածատէրները մեծ ազդեցութիւն են ունեցել արքունիքում և թագաւորի մօտ և այդ ազդեցութեան շնորհիւ կարող էին իրանց պաշտպանութեան համար զօրքեր և թնդանօթներ ուղարկել այնպիսի յարմարութեամբ, կարծես թէ այդ ոյժը գտնուում է իրանց անմիջական կարգադրութեան ներքոյ:

Ուրեմն, պարոններ, տեսնում էք, որ ազնուակաճութիւնը, որ ազդեցութիւն ունի թագաւորի և արքունիքի վրայ, սահմանադրութեան մի մասն է կազմում:

Կամ ենթադրենք հակառակ դէպքը, որ թագաւորն և ազնուականութիւնը համաձայնել և ցանկանում են վերահաստատել միջնադարեան համընթացական կազմակերպութիւնը և այն էլ ոչ միայն մանր արհեստներում, այդպիսի մասնակի փորձ իսկապէս մի քանի տարի առաջ կատարել է, այլ և այնպիսի ծաւալով, ինչպիսի ծաւալով նա գոյութիւն ունէր միջին դարերում, այսինքն ամբողջ հասարակական արդիւնաբերութեան մէջ, հետևապէս և խոշոր գործարանական արդիւնաբերութեան, մեքենայական արդիւնագործութեան մէջ: Պարոններ, ձեզ յայտնի է, որ միջնադարեան համընթացական կազմակերպութեան ժամանակ անհնարին էին խոշոր կապիտալը, խոշոր գործարանական արդիւնաբերութիւնը և մեքենայական արդիւնագործութիւնը: Այդ կազմակերպութեան ժամանակ գոյութիւն ունէին այնպիսի օրէնքներ, որոնք աշխատանքի ձիւղերի մէջ ամենուրեք սահմանափակումներ էին մտցնում, նոյն իսկ ա-

մինամօտ և միմեանց նման ձիւղերի մէջ, այնպէս որ ոչ մի արդիւնաբերող իրաւունք չունէր երկու այդպիսի ձիւղեր միացնել: Ծեփողը չէր կարող ձեղքեր ձեփելու, դարբինները անվերջ վէճեր ունէին փակահագործների հետ իրանց արհեստների սահմանների վերաբերմամբ. պաստառագործը իրաւունք չունէր ներկարարի գործ վերցնել: Բացի դրանից համընթացական կազմակերպութեան ժամանակ օրէնքներով ձիւղտ որոշւած էին լւրաքանչիւր արդիւնաբերութեան չափը և իւրաքանչիւր քաղաքում ամեն արհեստի մէջ վարպետը իր տրամադրութեան ներքոյ կարող էր ունենալ օրէնքով որոշւած բանւորական ոյժերի հաւասար թիւ:

Դուք տեսնում էք, որ հէնց այդ երկու պատճառների շնորհիւ էր որ խոշոր արդիւնաբերութիւնը, մեքենաների սիստեմով արդիւնաբերութիւնը մէկ օր անգամ չէր կարող գոյութիւն ունենալ համընթացական օրէնսդրութեան ժամանակ: Խոշոր արդիւնաբերութեան համար անհրաժեշտ են, ա) աշխատանքի զանազան ձիւղերի միացումը խոշոր կապիտալի տիրոջ ձեռքում, բ) մասսայական արդիւնաբերութիւն և ազատ մրցակցութիւն, ուրիշ խօսքով անսահման չափով բանւորական ոյժեր ունենալու յարմարութիւն:

Ի՞նչ դուրս կգար, եթէ այնուամենայնիւ այժմ ձեռնարկէին մտցնել համընթացական օրէնսդրութիւնը:

Պարոնայք Բօրդիլը, Էգլիսը և բամբակի, մետաքսի և ուրիշ միւսխոշոր գործարանատէրները կփակէին իրանց գործարանները և կարձակէին իրանց բանւորներին. մինչև սնգամ երկաթուղիների վարչութիւնը նոյնը կանէր. արհեստաւոր վարպետներից շատերը կարձակէին իրանց քեարգաներին (աշակերտներին). ժողովրդի այդ աճագին մասսան կնետէր փողոցները և կպահանջէր հաց ու աշխատանք. նրա կողմը կըռնէր խոշոր բուրժուազիան, ոգևորելով նրան իր ազդեցութեամբ, լսրախուսելով իր ոյժով, պաշտպանելով փողով

և կրճնկէր կոխը, որի յաղթանակը չէր կարող զօրքի կողմը մնալ:

Այդպիսով, պարոններ, դուք տեսնում էք, որ Բօթրիզը, Էգէլսը և ընդհանրապէս խոռոք արդիւնաբերողները կազմում են սահմանադրութեան մի մասը:

Ենթադրենք այժմ մի այնպիսի դէպք, որ կառավարութիւնը ցանկանում է մի այնպիսի միջոցի դիմել, որ վճռականապէս խախտում է խոշոր բանկիրների շահերը և ենթադրենք, որ թագաւորական բանկը չըպէտք է ծառայի խոշոր բանկիրներին և կապիտալիստներին, ինչպէս այժմ է ծառայում, որոնք առանց այդ էլ օգտուում են բոլոր փողերով և վարկով և որոնք այժմ մենակ կարող են իրանց ստորագրութեամբ բանկից փողեր ստանալ և վարկ ունենալ. թագաւորական բանկը չպէտք է աւելի ևս թեթևացնի դրանց համար բանկային վարկը, այլ պէտք է ծառայի ուրիշ նպատակի՝ այն է աղքատ և միջին կարողութեան տէր մարդկանց համար մատչելի դարձնել բանկային վարկը. դրա համար էլ այդ վարկը պէտք է կազմակերպել այնպէս, որ նա սայ այդ արդիւնքը: Իրագործելի՞ է այդ, պարոններ:

Ճիշտ է, պարոններ, որ դա ապստամբութիւն չէր առաջացնիլ: Սակայն ներկայ կառավարութեան համար այդ բանը անկարելի կլինէր:

Պարոններ, կառավարութիւնը երբեմն կարիք է զգում դրամական այնպիսի անազին միջոցների, որոնք նա չէ վճռում իբրև հարկեր հաւաքելու: Այդպիսի դէպքերում նա սկսում է ուսել իր ապագայ միջոցները, այսինքն փոխառութիւններ է անում և նրանց փոխարէն տալիս է պետական թղթեր: Դրա համար նրան հարկաւոր են բանկիրներ: Ճշմարիտ է, ժամանակի ընթացքում պետական թղթերի մեծ մասը նորից անցնում է ազգի հարուստ ամբողջ դասակարգի և մանր կապիտալիստների ձեռքը, բայց դրա համար ժամանակ է պէտք, յաճախ երկար ժամանակ: Իսկ կառավարութեան շուտով փող է հարկաւոր միանգամից կան

կարճ ժամանակամիջոցում. հէնց դրա համար էլ հարկաւոր են միջնորդներ, որպէսզի նրան տան ամբողջ գումարը և յանձն առնեն այն պետական թղթերից ստացւած շահի հաւաքելը, որ նրանք քիչ քիչ տարածում են հասարակութեան մէջ և այդ ժամանակ նրանք շահում են բօթսայում թղթերի կուրսը արհեստական կերպով բարձրացնելով: Այդ միջնորդները խոշոր բանկիրներն են և դրա համար էլ կառավարութիւնը չէ կարող նրանց հետ վէճի բռնել:

Այդպիսով, պարոններ, դուք տեսնում էք, որ Մենդելսոն և Շիկլէր բանկիրները՝ ընդհանրապէս բոլոր սահմանադրութեան մի մասն է կազմում:

Կամ վերցնենք մի ուրիշ դէպք. ենթադրենք, որ կառավարութիւնը մտածել է մի այնպիսի քրէական օրէնք հրատարակել, չինականի նման, որ գողութիւն արած որդու փոխարէն պատժում են նրա հօրը: Այդ հնարքը ընթացք չէր ստանալ, որովհետև դա չափազանց սաստիկ կհակասէր մեր կուլտուրայի մակերևոյթին և հասարակական խղճին: Բոլոր աստիճանաւորները, նոյն իսկ գաղտնի խորհրդականները կզարմանային և հէնց իրանք ազնուականների պալատի անդամները դատապարտելի կգտնէին այդ օրէնքը: Հետևապէս, պարոններ, դուք տեսնում էք, որ յայնքի սահմաններում հասարակական խիղք և կոզսուրայի մակերևոյթը նոյնպէս սահմանադրութեան մասերն են կազմում:

Կամ ենթադրենք, որ կառավարութիւնը վճռել է բաւարարութիւն տալ ազնուականութեան, բանկիրներին, խոշոր արդիւնաբերողներին և խոշոր կապիտալիստներին, իսկ դրա փոխարէն քաղաքական ազատութիւնից զրկել մանր բուրժուազիային և բանւորներին: Հնարաւոր է այդ, պարոններ: Ո՛չ, այդ բանը չէր յաջողել, եթէ նոյն իսկ այդ նպատակով միանային թագաւորը, ազնուականութիւնը և ամբողջ խոշոր ազնուականութիւնը: Այն ժամանակ դուք կասէիք. ոչ, լաւ է մեզ սպանեն, քան թէ մենք համբերենք

դրա համար. բանւորները այն ժամանակ դուրս կգան փողոցները և իրանք առանց Բօրզիգների և Էգելմաների կփակեն գործարանները. ամբողջ մանր բուրժուազիան նրանց օգնութեան կգնար և որովհետև դժւար կլինէր նրանց միացեալ դիմադրութեան յաղթելու, դրա համար էլ, պարոններ, դուք տեսնում էք, որ որոշ ծայրահեղ դէպքերում դուք բոլորդ ել սանձաւադուրեան մի մասն եք կազմում:

Ուրեմն, պարոններ, դուք այժմ արդէն հասկացաք, թէ ի՞նչ է երկրի սահմանադրութիւնը. դա մի որևէ երկրում գոյութիւն ունեցող ոյժերի բեալական փոխադարձ յարաբերութիւնն է:

Իսկ ի՞նչ է այն բանը, որ սովորաբար սահմանադրութիւն է կոչւում: Ի՞նչ է իրաւական սահմանադրութիւնը: Պարոններ, այժմ դուք ինքներդ կտեսնէք, թէ ինչ բան է այդ:

Ոյժերի այդ բէալական փոխադարձ յարաբերութիւնը գրւում է թղթի վրայ, որոշուում են գրաւոր կերպով և հէնց որ գրւեցին թղթի վրայ, նրանք արդէն ոչ միայն ոյժերի իրաւական փոխադարձ յարաբերութիւններ են, այլ և իրաւունքներ, իրաւական հիմնարկութիւններ և ով չէ հնազանդում նրանց, պատժի է ենթարկւում:

Հէնց այդպէս էլ, պարոններ, այժմ ձեզ յայտնի է, թէ ինչպէս է իրականանում ոյժերի իրական փոխադարձ յարաբերութիւնների գրաւոր յայտարարութիւնը, որը դարձնում է նրանց իրաւական փոխադարձ յարաբերութիւններ:

Ի հարկէ չեն գրում, որ պ. Բօրզիգը կազմում է սահմանադրութեան մի մասը, պ. Մենդելսօնը սահմանադրութեան մի մասն է և այլն և այլն. այդ բոլորը արտայայտում են շատ աւելի պարզ ձևով:

Օրինակի համար, եթէ ուզում են հաստատել, որ խոշոր արդիւնաբերողների և խոշոր կապիտալիստների փոքրամասնութիւնը միապետութեան մէջ այսքան կամ աւելի շատ իշխանութիւն ունի, որքան բոլոր քա-

ղաքացիները, բանւորները և գիւղացիները միասին վերցրած, այն ժամանակ այդ բանը ուղղակի և բացորոշ չեն գրիլ: Այդ նպատակով կհրատարակեն մի օրէնք, օրինակի համար նման 1849 թ. հրատարակած եռաստիճան ընտրողական օրէնքին, որը ամբողջ երկիրը բաժանում է ընտրողների երեք դասակարգերի՝ իրանց վճարած տուրքերի չափի համեմատութեամբ, որ որոշուում է նրանց կապիտալի քանակով:

Պարոններ, 1849 թ. այդ եռաստիճան ընտրողական օրէնքի հրատարակութիւնից յետոյ, կառավարութեան կազմած պաշտօնական ցուցակների համաձայն ամբողջ Պրուսիայում կային 3,255,600 համայնական ընտրողներ, որոնք բաժանւում էին երեք դասակարգերի, հետևեալ ձևով.

Առաջին ընտրողական դասակարգին ամբողջ Պրուսիայում պատկանում էին 153,808 ընտրողներ.
 Երկրորդ դասակարգին 409,945 »
 Երրորդ » 2,691,950 »

Պարոններ, կրկնում եմ, որ վերոյիշեալ թւերը վերցրած են պաշտօնական ցուցակներից:

Դրանցից դուք տեսնում էք, որ Պրուսիայում 1,33808 շատ հարուստ մարդիկ քաղաքական այնքան իշխանութիւն ունին, որքան 2,691,950 քաղաքացիներ, գիւղացիներ և բանւորներ: Յետոյ այդ 153,808 շատ հարուստ մարդիկ և 409,945 չափաւոր հարուստ մարդիկ ունին երկու անգամ աւելի քաղաքական իշխանութիւն, քան թէ ազգի միւս բոլոր դասակարգերը միասին վերցրած, այնպէս որ 153,808 շատ հարուստ և 409,945 երկրորդ դասակարգին պատկանող ընտրողները արդէն աւելի շատ քաղաքական իշխանութիւն ունեն, քան թէ երկրորդ դասակարգի մօտաւորապէս հարուստ միւս կէսը և երրորդ դասակարգի 2,691,950 հոգին միասին վերցրած:

Դրանից դուք տեսնում էք, պարոններ, որ հետևանքը բոլորովին միևնոյնն է դուրս գալիս, ինչպէս որ

եթէ սահմանադրութեան մէջ ուղղակի գրէին հետեւեալ քաղաքավարի խօսքերը. հարուստը 17 անգամ աւելի շատ քաղաքական իշխանութիւն պէտք է ունենայ, քան միւս քաղաքացին, կամ այնքան, որքան 17 ուրիշ քաղաքացիներ:

Այդ եռաստիճան ընտրողական օրէնքը հրատարակելուց առաջ մեզ մօտ գոյութիւն ունէր 1848 թ. ապրիլի 8-ի օրէնքով մտցրած ընդհանուր ընտրողական իրաւունքը, որը իւրաքանչիւր քաղաքացու համար, լինէր նա հարուստ կամ աղքատ, ընդունում էր միատեսակ ընտրողական իրաւունք և միատեսակ քաղաքական իշխանութիւն, միատեսակ իրաւունք տէրութեան կամքի և նպատակի որոշելուն մասնակցելու համար: Այդ բանը, պարոններ, ինչպէս տեսնում էք հաստատում է վերևում ասածը՝ այն է, որ հեշտ է ձեզանից, քաղաքացիներից և բանւորներից խլել ձեր քաղաքական ազատութիւնը, եթէ դեռ ուղղակի և արմատապէս ձեռք չտան ձեր անձնական բարեկեցութեանը, անձին և սեպականութեանը: Դուք հեշտութեամբ թոյլ տւեցիք խլել ձեզանից ձեր ընտրողական իրաւունքը և մինչև այժմ այդ իրաւունքը վերադարձնելու առթիւ կատարելիք ազիտացիայի համար և ոչ մի խօսք չի լսում:

Բացի դրանից, եթէ ուզում են սահմանադրութեան մէջ հաստատել, որ ազնուական հողատէրերի մի աննշան թիւը այնքան իշխանութեան տէր լինի, որքան բոլոր երեք գասակարգերի ընտրողները միասին՝ այսինքն որքան ունի ամբողջ ազգը, այդ էլ այնուամենայնիւ չեն արտայայտիլ ուղղակի անքաղաքակիրթ ձևով, որովհետև, պարոններ, մի անգամ ընդ միշտ ի նկատի ունեցէք, որ բոլոր պարզ և ուղղակի ասածը կոպիտ և անքաղաքավարի է: Սահմանադրութեան մէջ այսպէս կգրեն. հին և արմատական հողատիրութեան ներկայացուցիչներից մի քանի ոչ էական յաւելումներով հիմնում է ազնուականների պալատը: Նրա համաձայնութիւնը անհրաժեշտ է ներկայացուցիչների պալատի բոլոր վճիռների իրականացման հա-

մար, որ պալատ, որ ներկայացնում է ամբողջ ազգը. այդպիսով մի խումբ հին հողատէրերի քաղաքական այնպիսի իշխանութիւն է տրւում, որ գերակշռում է ազգի և նրա բոլոր գասակարգերի միաձայն կամքը:

Միևնոյն տեսակ, երբ ցանկանում են, որ թագաւորը մենակ այնքան և մինչև անգամ աւելի շատ քաղաքական իշխանութիւն ունենայ, քան ընտրողների բոլոր երեք գասակարգերը կամ քան ամբողջ ազգը, նոյն իսկ ազնուական հողատէրերի հետ միասին, այն ժամանակ այսպէս են անում:

Սահմանադրութեան 47-րդ յօդուածում գրում են. «Թագաւորը նշանակում է զօրքի բոլոր պաշտօնեաներին», իսկ 108-րդ յօդուածում ասում է. «զօրքը սահմանադրութեան երդում չէ տալիս»: Այդ յօդուածով առաջ է դալիս մի թէօրիս, որի համաձայն թագաւորը զօրքի վերաբերմամբ մի բոլորովին ուրիշ գիրք է բռնում, քան պետական միւս բոլոր հիմնարկութիւնների վերաբերմամբ. դուրս է գալիս, որ նա զօրքի վերաբերմամբ ոչ միայն թագաւոր է, այլ մի ուրիշ բոլորովին առանձին, խորհրդաւոր, անհասանելի տէր, որի վրա մասնացոյց անելու համար հնարել են պատերազմական առաջնորդ (Krigsherr) խօսքը: Դրա շնորհիւ բանից դուրս է գալիս, որ ներկայացուցիչների պալատը կամ ազգը զօրքի հետ և ոչ մի գործ չունի, որ նա չպէտք է խառնուի նրա ներքին կարգերի և կազմակերպութեան մէջ, այլ զօրքի պահպանութեան համար միայն փող տայ: Եւ պէտք է խոստովանել, ճշմարտութիւնը ամեն բանից բարձր է, որ այդ թէօրիան որոշ չափով հիմնաւորւած է սահմանադրութեան 108-րդ յօդուածով: Երբ հիմնական օրէնքներով հաստատւած է, որ զօրքը չպէտք է երդւի սահմանադրութեամբ, ինչպէս որ այդ պարտաւոր են անել պետական ծառայութեան մէջ գտնուող բոլոր պաշտօնեաները և մինչև անգամ թագաւորը, սահմանադրութիւնը դրանով ընդունում է փոքրիկ, որ զօրքը նրանից դուրս է գտնում և ոչ մի քայլ չի կարող բան չունի

21872-19



նրա հետ, որ զօրքը բացառապէս յարարերութիւն ունի միմիայն թագաւորի սնձնաւորութեան և ոչ թէ երկրի հետ:

Երբ արդէն հաստատուած է, որ թագաւորն է նշանակուած զօրքի բոլոր պաշտօնեաներին և որ զօրքը նրա վերաբերմամբ մի առանձին տեսակի յարարերութիւն ունի, գրանով արդէն մենակ թագաւորին ոչ թէ նոյնքան, այլ նոյն իսկ տասն անգամ աւելի շատ քաղաքական իշխանութիւն է տրուած, քան որքան ունի ամբողջ երկիրը միասին վերցրած, նոյն իսկ այն դէպքում, եթէ իրականապէս երկրի իսկական ոյժը տասը, քսան և յիսուն անգամ գերակշռէր զօրքի ոյժից: Այդ, ըստ երևոյթին հակասութեան պատճառը շատ պարզ է:

Թագաւորի իշխանութեան քաղաքական գործիքը՝ զօրքը կազմակերպուած է. զօրքը ամեն բոպէ կարող է ժողովել, նա հիանալի կերպով կարգւորուած է և ամեն մի բոպէ կարող է գործել. ընդհակառակը, ազգի մէջ ամփոփուող ոյժը թէև իրականութեան մէջ անհամեմատ աւելի մեծ է, բայց կազմակերպուած չէ. պարոններ, ազգի կամքը և մանաւանդ վճռողականութեան այն աստիճանը, որին հասել է այդ կամքը, ոչ միշտ կարող է հեշտութեամբ ճանաչել նրա անդամների կողմից. դրա համար էլ ոչ ոք ճիշտ չէ կարող իմանալ, թէ որքան ժողովուրդ կգնայ նրա յետևից: Բացի զրանից ազգը չունի կազմակերպուած ոյժի այն գործիքները, որոնք կազմում են սահմանադրութեան այն կարևոր հիմքերը, որոնց մասին ես յիշատակեցի վերևում, այն է թնդանօթները: Ճիշտ է, այդ թնդանօթները քաղաքացիների փողով են ձեռք բերուում. ճիշտ է, նրանք պատրաստուում և կատարելագործուում են գիտութիւնների շնորհիւ, որ ծաղկեցնում է քաղաքացիական հասարակութիւնը, Ֆիզիկայով, տեխնիկայով և այլն:

Հետևապէս հէնց միայն նրանց գոյութիւնը ցոյց է տալիս, թէ որքան մեծ է քաղաքացիական հասարակութեան ոյժը, որքան մեծ են գիտութիւնների,

տեխնիքական արուեստների, գործարանական կեանքի և աշխատանքի ճիւղերի զանազան տեսակները: Բայց հէնց այստեղ մարդ յիշում է Վիրգիլիոսի խօսքերը. Sic vos non vobis. դու այդ քեզ համար չես անում: Թնդանօթները պատրաստուում են միայն կազմակերպուած ոյժի համար. դրա համար էլ երկիրը իմանում է, որ ընդհարման դէպքում իր այդ սեպհական «մանուկներին», իր ոյժի այդ վկաներին նա կզանի թշնամական բանակում: Ահա թէ ինչու փոքր, բայց աւելի կազմակերպուած ոյժը յաճախ երկար ժամանակ տիրում է ազգի աւելի մեծ, բայց ոչ կազմակերպուած ոյժին, մինչև որ վերջապէս վերջինս վճռում է դիմադրել կազմակերպուած ոյժին իր ոչ կազմակերպուած գերազանցութեամբ, եթէ չափազանց երկար է շարունակուում տէրութեան ղեկավարութիւնը և կառավարութիւնը հակառակ ազգայնական շահերին և ազգի կամքին:

Այդպիսով, պարոններ, մենք այժմ գիտենք երկրի երկու սահմանադրութիւնների էութիւնը, նրա իսկական սահմանադրութիւնը, ոյժերի բնական փոխադարձ յարաբերութիւնը և նրա գրաւոր սահմանադրութիւնը, որը առաջինից տարբերելու համար, կարող ենք անուանել, թէկուզ թղթի մի կտոր:

Իսկական խարտիան, իսկական սահմանադրութիւն ունի ամեն մի երկիր միշտ, ինչպէս այդ ձեզ համար շուտով կպարզւի. չկայ մի աւելի սխալ ու աւելի անմիտ եղրակացութիւնների տանող կանխակալ համոզմունք, քան այն տարածուած և տիրող կարծիքը, իբր թէ խարտիաները կամ սահմանադրութիւնները կազմում են միայն նորագոյն ժամանակի բացառիկ սնձնաշատկութիւնները: Ընդհակառակը իւրաքանչիւր երկիր անհրաժեշտօրէն ունի բնական խարտիա կամ սահմանադրութիւն, այնպէս անհրաժեշտ, որքան իւրաքանչիւր մարմին, իւրաքանչիւր օրգանիզմ, որ անպատճառ կազմուած է այսպէս կամ այնպէս, ունի որևէ լաւ կամ վատ սահմանադրութիւն: Չէ որ իւրաքանչիւր

չիւր երկրում անպատճառ գոյութիւն ունին որևէ ոյժերի բէալական փոխադարձ յարաբերութիւններ:

Երբ Յրանսիայում 18-րդ դարում յեղափոխութիւնից շատ առաջ, բացարձակ լեզդիտիական միապետութեան օրով Լուզովիկոս XV-րդ թագաւորը 1775 թ. փետրւարի 4ի յայտարարութեամբ վերացրեց ճանապարհային տուրքը, որով գիւղացիները պարտաւոր էին առանց վարձատրութեան աշխատելու ճանապարհների վրայ, նրանց շինելու և նորոգելու և դրա փոխարէն ճանապարհների ծախքերը ծածկելու համար տուրքեր նշանակեց, որը վերաբերում էր նաև աղնւականների հողերին, Ֆրանսիական պարլամենտը հակառակից դրան և առարկեց. Le peuple de France est taillable et corvéable à volonté, c'est une partie de la constitution que le roi ne peut pas changer (Ֆրանսիական ժողովրդին (արտօնազուրկ և հասարակ ժողովրդին) կարելի է կամայականօրէն տուրքերի և հարկերի ենթարկել. այդ բանը սահմանադրութեան մի մասն է, որը թագաւորը իրաւունք չունի փոխելու):

Ուրեմն դուք տեսնում էք, պարոններ, որ այն ժամանակն էլ, ինչպէս և այժմ, խօսում էին սահմանադրութեան մասին, այն էլ մի այնպիսի սահմանադրութեան, որը թագաւորը չէր կարող փոփոխութեան ենթարկել:

Ճիշտ է, այն բանը, որին այստեղ սահմանադրութեան նշանակութիւն է արւում, հասարակ ժողովուրդը կամայականօրէն հարկերի և տուրքերի ենթարկելու հնարաւորութիւնը, այն ժամանակ չէր գրւած մի առանձին թղթի վրայ, որտեղ գրւած լինէին երկրի բոլոր օրէնքները և բոլոր կարևոր կառավարչական սկզբունքները, դա միայն միջնադարեան Յրանսիայում ոյժերի բէալական փոխադարձ յարաբերութեան արտայայտութիւնն էր: Իսկապէս միջին դարերում ժողովուրդը այնքան անզօր էր, որ նրան կամայականօրէն կարելի էր հարկերի և տուրքերի ենթարկել. ոյժերի իրական փոխադարձ յարաբերութիւններն էլ ի

նկատի էին ունենում և դրա համեմատ էր ժողովրդի վրայ միշտ բարդում էին ծանրութիւններ: Իրերի այդ իրական ընթացքը տալիս էր այսպէս կոչւած պրեցենդենտներ, որոնք այնքան կարևոր դեր են խաղում միջին դարերի սահմանադրական հարցերում, իսկ Անգլիայում նոյն իսկ այսօր էլ: Ժողովրդի իրական ճնշման շնորհիւ յաճախ արտայայտւում էր այն կարծիքը, որ կարելի է ժողովրդին նեցել. առհնր ուրիշ տեսակ էլ լինել չէր կարող: Այդ ձևով արտայայտւած կարծիքը դառնում էր պետական-իրաւական ըսկզբունք, որի վրայ յետոյ նոյնանման ղէպքերում էլ մատնացոյց էին անում: Ոչ սակաւ որևէ առանձին հանգամանք, որ արմատացել էր իրական փոխադարձ յարաբերութիւնների մէջ, առանձնապէս արտայայտւում և պերզամենտի թերթի վրայ արձանագրւում էր: Այդպիսով առաջ էին գալիս զանազան franchis-ներ, ազատութիւններ, իրաւունքներ, արտօնութիւններ, զատակարգերի, արհեստների, քաղաքների կանոնադրութիւններ և այլն:

Այդ բոլոր փաստերը, պրեցենդենտները, պետական-իրաւական սկզբունքները, պերզամենտները, ազատութիւնները, կանոնադրութիւնները և արտօնութիւնները միասին կազմում էին երկրի սահմանադրութիւնը և այդ բոլորը իր էութեամբ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ կրկրի ոյժերի իրական փոխադարձ յարաբերութեան հասարակ և պարզ արտայայտութիւնը:

Հետևապէս իսկական սահմանադրութիւն ունեցել են բոլոր երկրները ամեն ժամանակ:

Բայց այն, ինչ որ կազմում է նորագոյն ժամանակի բնորոշ առանձնայատկութիւնը, դրանք ոչ թէ իսկական, այլ գրաւոր սահմանադրութիւններն են կամ թղթի կտորները. չափազանց կարևոր է այդ բանը պարոններ, աչքից չթողնել:

Եւ յիրաւի, նորագոյն ժամանակներս մենք գրեթէ բոլոր տէրութիւնների մէջ նկատում են ձգտում գրաւոր սահմանադրութիւն ձևք բերելու, որը պէտք է

մի գրութեամբ՝ մի կտոր թղթի վրայ ամբացնի և հաստատի երկրի բոլոր հաստատութիւնները և կառավարչական սկզբունքները:

Որտեղից է ծագում նորագոյն ժամանակի այդ բնորոշ ձգտումը:

Դա էլ մի շատ կարևոր հարց է և այդ հարցին միայն պատասխանելով կարելի է իմանալ, թէ ինչպէս պէտք է ձեռնարկել սահմանադրութիւն կազմելու, ինչպէս պէտք է նայել արդէն գոյութիւն ունեցող սահմանադրութիւնների վրայ և ինչպէս վերաբերւել նրանց նկատմամբ, մի խօսքով միայն այդ պատասխանը կարձղ է սովորեցնել սահմանադրական ամբողջ արուեստը, սահմանադրական ամբողջ իմաստութիւնը:

Այդպիսով ես հարցնում եմ. որտեղից է ծագում նորագոյն ժամանակի գրաւոր սահմանադրութիւն կազմելու բնորոշ ձգտումը:

Հըմ, պարոններ, որտեղից կարող է ծագել այդ:

Ահնյայտնի է, որ հանելուկը կայանում է նրանում, որ այդպիսի ձգտումով տոգորւած երկրների ոյժերի իսկական փոխադարձ յարաբերութիւնների մէջ փոփոխութիւն է առաջացել: Եթէ որ և է հասարակութեան ոյժերի իսկական փոխադարձ յարաբերութիւնների մէջ փոփոխութիւններ եղած չլինէին, եթէ այդ յարաբերութիւնները առաջւանը լինէին, պարզ է, որ անհնարին և անմիտ կլինէր, եթէ այդ միկնոյն հասարակութիւնը նոր սահմանադրութեան ձգտման կարիք ունենար: Այդ հասարակութիւնը նախկին սահմանադրութեանը կողմնակից կլինէր. շատ շատ մի նոր բան նա կարող էր անել, այն է նա մի թղթի վրայ կհաւաքէր իր սահմանադրութեան ցրւած մասերը:

Ինչպէ՞ս են ծագում փոփոխութիւններ հասարակութեան ոյժերի իսկական փոխադարձ յարաբերութիւնների մէջ:

Երևակայեցէք, օրինակի համար, նոսր ազգաբնակչութեամբ միջնադարեան մի տէրութիւն, ինչպէս որ

էր այն ժամանակուայ բոլոր տէրութիւններում, իր թագաւորով և ազնուականութեամբ, որին պատկանում է հողի մեծ մասը: Ազգաբնակչութեան սակաւութեան շնորհիւ նրա միայն մի չնչին մասը կարող է արդիւնաբերութեան և առևտրի տրամադրութեան տակ գտնւել, այն ինչ ազգաբնակչութեան մեծ մասը դեռ պէտք է մշակի հողը և արդիւնաբերի հողագործական անհրաժեշտ արտադրութիւններ: Որովհետև հողի մեծ մասը գտնոււմ է ազնուականութեան ձեռքում, զրա համար էլ այդ ազգաբնակչութիւնը զբաղմունք և աշխատանք է գտնում ազնուականութեան մօտ, որի վերաբերմամբ նա զանազան յարաբերութիւնների մէջ է գտնոււմ՝ իրրե վաստալներ, ճորտեր, ժառանգական ֆերմէրներ և այլն. բայց այդ բոլոր բազմազան յարաբերութիւնները կազմում են միկնոյն սկզբունքի զանազան ձևերը, այն է ազգաբնակչութեան ազնուականութիւնից կախւած լինելը, կամ ստիպել նրան ազնուականութեանը ծառայելու իրրե հպատակներ կամ վաստալներ և մասնակցել նրա պատերազմներում: Երկրագործական արդիւնքների այն աւելորդ մասով, որ ազնուականութիւնը ստանում է իր կալուածներից, իր ամրոցներում պահպանում է ձիաւորներ, թիկնապահներ և ընդհանրապէս զանազան տեսակի զինւորներ:

Ազնուականութեան այդ ոյժի դէմ թագաւորը էականապէս ոչ մի իսկական ոյժ չունի, բացի այն ազնուականների օգնութիւնից, որոնք կամաւոր կերպով, ստիպել նրանց դժւար կլինէր, արձագանք են տալիս նրա կոչին և յետոյ մի քանի՝ սակաւթիւ բնակիչներ ունեցող քաղաքների աննշան և նոյնիսկ յիշատակութեան ոչ արժանի օգնութիւնից:

Ինչպէ՞ս պէտք է լինի, պարոններ, մի այդպիսի տէրութեան սահմանադրութիւնը:

Իհարկէ նա անպատճառ կհամապատասխանի այն երկրի ոյժերի իրական փոխադարձ յարաբերութիւններին, որը մի քիչ առաջ ի նկատի ունէինք:

Սահմանադրութիւնը կլինի դասակարգային, իսկ ազնուականութիւնը առաջին և ամեն տեսակետից տիրապետող դասակարգը կլինի: Առանց նրա համաձայնութեան թագաւորը իրաւունք չի ունենալ ոչ մի զրօշի անգամ հարկեր նշանակել. նա ազնուականութեան նկատմամբ կլինի միայն primus inter pares—առաջինը հաւասարների մէջ:

Եւ յիրաւի, պարտններ, այդպէս էր միջին դարերում սահմանադրութիւնը Պրուսիայում և միւս տէրութիւնների մեծ մասում:

Բայց այժմ ենթադրենք, որ ազգաբնակչութիւնը հետզհետէ բազմանում է, արդիւնաբերութիւնը և արհեստները ծաղկում են և այդ բանը հնարաւորութիւն է տալիս ազգաբնակչութեան նոր աճման, որ սկսում է լցնել քաղաքները: Կապիտալը և փողային հարստութիւնը սկսում են զարգանալ բուրժուազիայի ձեռքում և քաղաքային գիւղիւնների մէջ: Ի՞նչ է լինում դրանով:

Քաղաքային ազգաբնակչութեան աճումը, որ կախումն չունի ազնուականութիւնից և որի շահերը նոյն իսկ հակառակ են նրա շահերին, շատ օգտակար է թաթաւորի համար. ազգաբնակչութեան աճումով բազմանում է նաև զէնք կրելու ընդունակ ժարդկանց թիւը, որոնք պէտք է լինեն թագաւորի տրամադրութեան ներքոյ. քաղաքային ազգաբնակչութիւնը և արհեստներով զբաղող բոլոր մարդիկ սաստիկ փնասուում են ազնուականների միմեանց հետ ունեցած վճճերից և կռիւներից. նրանք յօգուտ առևտրի և արդիւնաբերութեան պէտք է ցանկանան հասարակական հանգրստութիւն և ապահովութիւն և երկրի մէջ կանոնաւոր արդարադատութեան գործադրութիւն. դրա համար էլ նրանք սիրով պաշտպանում են թագաւորին փողով և ժարդկանցով. թագաւորը նրանց օգնութեամբ կարող է հարկը պահանջած դէպքում զինուորական այնպիսի ոյժ հաւաքել, որը գերազանցում է ազնուականութեան ոյժից: Այն ժամանակ թագաւորները կսկին աւելի ևս

սահմանափակել ազնուականութեան իշխանութիւնը և խլել նրա՝ պատերազմներ մղելու իրաւունքը. նրանք կաւերեն նրա ամբողջները, եթէ ազնուականութիւնը կխախտի երկրի օրէնքները. վերջապէս ժամանակի ընթացքում արդիւնաբերութեան զարգացման շնորհիւ երկրի ազգաբնակչութիւնը և փողային կապիտալները այնքան կմեծանան, որ թագաւորը հնարաւորութիւն կունենայ մշտական զօրք պահել և իր զօրքի գնդերը առաջ մղել ազնուականների ժողովի դէմ, ինչպէս որ այդպէս վարեց մեծ կուրֆիւրստը կամ Ֆրիդրիխ Վիլհելմ Ա.-ը, որ ասել է. je stabilirai die Souveränität, wie einen rocher de bronze*) (ես կամբարցնեմ ինքնակալութիւնը բրոնզէ ժայռի պէս). նա կոչնչացնի ազնուականութեան հարկային արտօնութիւնը և վերջ կդնի հարկեր հաստատելու նրա իրաւունքին:

Դուք տեսնում էք, որ այստեղ ոյժերի իրական փոխադարձ յարաբերութիւնների փոխոխութեամբ փոխուում է նաև սահմանադրութիւնը. առաջ է գալիս բացարձակ միապետութիւն:

Ազնուականութիւնը այլևս հնարաւորութիւն չունի թագաւորին հակառակելու և վաղուց պէտք է է հրաժարէր իր անկախ զինուորական ոյժից: Նա արդէն մոռացել է թագաւորի դէմ ուղղած իր նախկին դիմադրութիւնը և այն, որ երբեմն նրա հաւասարն էր. ազնուականների մեծ մասը իրանց ամբողջներից գաղթել է թագաւորի աթոռանիստ քաղաքը. այնտեղ նրանք ստանում են կենսաթոշակներ և նպաստում են միապետի զօրութեան և փառքի բարձրանալուն:

Չնայելով դրան արդիւնաբերութիւնը և արհեստները աւելի և աւելի են զարգանում. նրանց ծաղկմամբ ազգաբնակչութիւնն էլ աւելի և աւելի է աճում:

Ըստ երևոյթի այդ պրօցեսն էլ առաջւայ նման

*) Կէս գերմաներէն, կէս ֆրանսերէն նախադասութիւն:

պէտք է յօգուտ թագաւորի ծառայի, որ կարող է դրա շնորհիւ մշտապէս մեծացնել իր զօրքը և որը այդպիսով համաշխարհային նշանակութիւն է ստանում:

Սակայն քաղաքացիական հասարակութեան զարգացումը, վերջապէս հասնում է այնպիսի հսկայական, այնպիսի վիթխարի չափերի, որ թագաւորը մինչև անգամ մշտական զօրքի ոյժի վրայ հիմնելով, անկարող է քաղաքացիների ոյժի աճման հետ միասին մնալ միևնույն մակերևոյթի վրայ:

Մի քանի թւեր, պարոններ, ձեզ այդ բանը կը պարզեն կատարեալ որոշութեամբ:

1657 թւին Բերլինը ունէր 20,000 բնակիչ: Գրեթէ միևնույն ժամանակը, մեծ կուրֆիւրստի մահւան օրով զօրքը բաղկացած էր 24—30,000 հոգուց:

1803 թւին Բերլինում արդէն կային 153,070 բնակիչ:

1819 թւին, 16 տարի անցնելուց յետոյ, Բերլինը արդէն ունէր 192,646 բնակիչ:

Այդ տարին զօրքը բաղկացած էր 137,636 հոգուց: Այդ ժամանակ, ինչպէս ձեզ յայտնի է, 1814 թւի սեպտեմբերի օրէնքի հիման վրայ, որ այժմ ուղում են մեղանից խել, ժողովրդական զօրքը (Landwehr) մշտական զօրքի հետ չէին հաշուում:

Դուք տեսնում էք, որ զօրքը այն ժամանակ չորս անգամ աւելի մեծ էր, քան մեծ կուրֆիւրստի օրով, իսկ Բերլինի բնակիչների թիւը 9 անգամ աճել էր:

Բայց հէնց այդտեղից էլ սկսում է դեռ աւելի ևս սաստիկ զարգացումը:

1846 թւին Բերլինի ազգաբնակչութիւնը (բոլոր թւերը ևս վերցրել եմ պաշտօնական աղբիւրներից) հասաւ մինչև 386,308 հոգու, զրեթէ 400,000-ի, հետևապէս 1819 թւից ի վեր ազգաբնակչութիւնը երկու անգամ մեծացել էր: 26 տարւայ ընթացքում նա աւելի քան կրկնապատկւել էր, իսկ այժմ, ինչպէս ձեզ յայտնի է, միլիոնից անցել է:

1846 թւին զօրքի թիւը բաղկացած էր 138,810

հոգուց: Հետևապէս այդ զօրքը 1819-ից սկսած չէ մեծացել, բոլորովին չմասնակցելով քաղաքացիութեան հսկայական զարգացմանը:

Այդ հսկայական զարգացման շնորհիւ քաղաքացիական հասարակութիւնը սկսում է իրեն համարել իբրև քաղաքական մի անկախ ոյժ: Ազգաբնակչութեան այդ զարգացման հետ ձեռք ձեռքի տւած աւելի ևս զարգանում է հասարակական հարստութիւնը. փառահեղ գոյնով ծաղկում են գիտութիւնները. աւելի է բարձրանում հասարակական խղճի մակերևոյթը, որը, ինչպէս մենք արդէն ասել ենք, նոյնպէս կազմում է սահմանադրութեան մի մասը: Քաղաքացիները սկսում են դատել այսպէս. մենք այլևս չենք ցանկանում կուռավարւող մի կամադուրի մասսա լինել, որը չունի սեպնական կամք. մենք ինքներս ենք ցանկանում կուռավարել, թող թագաւորը կուռավարի մեզ և դեկավարի մեր գործերը այնպէս, ինչպէս որ մենք ենք ցանկանում:

Կարճն ասած, պարոններ, երկրում իրական, փաստական փոխադարձ յարաբերութիւնները փոփոխւել են: Ուրիշ խօսքերով. հասարակութեան մէջ հասել է 1848 թուականի մարտի 18-ը:

Այդպիսով այստեղ պատահեց այն, ինչ որ մեր ուսումնասիրութեան սկզբում մենք կատարելապէս անհնարին օրինակ էինք ենթադրում: Մենք ենթադրել էինք, որ հասարակութիւնը հրդէհի շնորհիւ է զրկւել իր բոլոր օրէնքներից: Եւ իսկապէս այդ օրէնքները ոչնչացել են ոչ թէ հրդէհից, այլ փոթորիկից:

«...Das Volk stand auf,
Des Sturm brach los»

«Փողովուրդը ապստամբեց, փոթորիկը պայթեց»:

Յաղթական յեղափոխութիւնից յետոյ հասարակութեան մէջ մասնաւոր իրաւունքը անձեռնմխելի է մնում, իսկ հրապարակական իրաւունքի բոլոր օրէնքները վերացւել են կամ պահպանւում են միայն ժա-

մանակաւոր նշանակութիւն և հարկաւոր է նոր օրէնք-
ներ ստեղծել:

Այդպիսով անհրաժեշտ է համարուած կազմել
նոր, գրաւոր սահմանադրութիւն և անա թագաւորը
ինքը Բերլինում ազգային ժողով է գումարում, որպէս
զի հաստատուի, ինչպէս առաջ ասում էին, նոր գրաւոր
օրէնսդրութիւն, կամ ինչպէս յետոյ էին ասում, որպէս
զի համաձայնութիւն լինի նրա հետ դրա վերաբեր-
մամբ:

Այժմ հարց է ծագում, ինչպիսի՞ պայմաններ են
հարկաւոր, որպէսզի գրաւոր սահմանադրութիւնը լաւ
և հաստատուն լինի:

Շատ պարզ է միայն մի պայման, և դա, պարոն-
ներ, ինքն ըստ ինքեան բղխում է մեր ամբողջ հե-
տազօտութիւնից—գրաւոր օրէնսդրութիւնը պէտք է
համապատասխանի իսկական սահմանադրութեան՝ ոչ
սիմֆի երկրի ոյժերի բեալական փոխադարձ յարաբե-
րիւններին: Եւ եթէ գրաւոր օրէնսդրութիւնը չէ համա-
պատասխանում իսկականին, այն ժամանակ նրանց
մէջ ծագում է ընդհարում, որի առաջը ոչնչով չէ
կարելի աւնել և որի ընթացքում գրաւոր սահմանա-
դրութիւնը,—մի հասարակ թղթի կտորը անխուսափե-
լի կերպով յաղթւում է իսկական սահմանադրութիւ-
նից՝ նրկրի ոյժերի իսկական փոխադարձ յարաբե-
րութիւններից:

Ուրեմն, ինչպէ՞ս պէտք է վարուել այդպիսի դէպ-
քում:

Պէտք է ամենից առաջ հոգալ ոչ թէ գրաւոր, այլ
իսկական սահմանադրութեան մասին, այսինքն եր-
կրում գոյութիւն ունեցող ոյժերի իրական փոխադարձ
յարաբե-րութիւնների փոփոխութեան մասին այն հոգով,
ինչ հոգով նպաստաւոր է այդ քաղաքացիների համար:

Ճշմարիտ է, որ մարտի 18-ը ցոյց տւեց, որ ազգի
ոյժը այժմ արդէն աւելի մեծ է զօրքի ոյժից: Երկար և
արիւնտհեղ կուրից յետոյ զօրքերը ստիպւած էին յետ
նահանջել:

Բայց ես արդէն ձեր ուշադրութիւնը դարձրել եմ
այն բանի վրայ, թէ ինչպիսի՞ տարբերութիւն գոյու-
թիւն ունի ազգի և զօրքի ոյժերի մէջ. զօրքի ոյժը,
չնայելով որ իսկապէս փոքր է, սակայն երկար գոր-
ծունէութեան ընթացքում աւելի իրական է հանդիսա-
նում, քան ազգի՝ նրանից աւելի գերազանցող ոյժը:

Այդ տարբերութիւնը, ինչպէս դուք յիշում էք,
կայանում է նրանում, որ ազգի ոյժը կազմակերպւած
չէ, իսկ զօրքի ոյժը կազմակերպւած է, ամեն օր պատ-
րաստ է վերանորոգել կուրը և դրա համար էլ ժամա-
նակի ընթացքում նա պէտք է ընդունակ հանդիսա-
նայ այն կուր յաղթանակը տանելու, որ նա մղում է
ազգի թէև չափազանց մեծ, բայց չկազմակերպւած
ոյժի դէմ, որը չափազանց զրգուած բողբոջներին մի-
այն համերաշխ կերպով ի մի է խմբում: Ահա թէ
ինչու համար մարտի 18-ը ժողովրդի համար անխու-
սափելիօրէն առանց հետեւանքի մնաց, երբ յաղթու-
թեան այդ երջանիկ բողբոջներից չօգտուեցին զօրքի
կազմակերպւած ոյժը այնպէս վերակազմելու, որպէս
զի նա թագաւորի ձեռքում այլևս միջոց չլինէր ժո-
ղովրդի դէմ:

Հարկաւոր էր, օրինակ զինւորի ծառայութեան
ժամանակամիջոցը 6 ամսով սահմանափակել: Այդքան
ժամանակամիջոցը զինւորական առաջին հեղինակու-
թիւնների կարծիքով կատարելապէս բաւական է, որ
զինւորն ստանայ զինւորական լիակատար ուսում,
իսկ միւս կողմից այդքան ժամանակը չափազանց
կարճ է, որպէս զի զինւորին ներշնչել իր կաստայի
առանձնապատուկ ոգի. վեցամսեայ ժամանակամիջոցը
այնքան կարճ է, որ զօրքը միշտ պէտք է վերանորո-
գել ժողովրդի միջից ընտրւած նոր մարդկանցով և
զրանով նրան դարձնել տէրութեան զօրքից ժողո-
վրդական զօրք:

Բացի դրանից, հարկաւոր էր տնօրինել, որ ստո-
րին կարգի բոլոր սպայ-ատտիճանաւորները, դո՞նէ
մինչև մայօրները, ոչ թէ վերևից նշանակւէին, այլ

ընտրւէին հէնց իրանց՝ զինւորների կողմից. միայն այն ժամանակ սպաների պաշտօնները ժողովրդի թըշնամիները չէին բռնիլ, որոնք աշխատում են զօրքը թագաւորական իշխանութեան կոյր գործիքը դարձնել:

Յետոյ հարկաւոր էր նաև անօրինել, որ զօրքի մէջ պատահող բոլոր յանցանքները, բացի զուտ զինւորական յանցանքներից, յանձնւէին սովորաբար քաղաքացիական դատարանին. այդ բանը զօրքին կսովորեցնէր իրեն ժողովրդի մի մասը համարելու և ոչ թէ իբրև մի առանձին ու ինքնուրոյն կաստա:

Բոլոր թնդանօթները, որոնք իսկապէս պէտք է ծառայեն երկրի պաշտպանութեան համար, հարկաւոր էր յանձնել ժողովրդից ընտրւած քաղաքային իշխանութիւններին պահպանելու համար, բացառութեամբ մի քիչ քանակութեան, որ անհրաժեշտ է զինւորական վարժութիւնների համար: Այդ արտիլերիայի մի մասը հարկաւոր էր գործադրել արտիլերիական գնդեր, քաղաքացիական զօրքեր, ազգային գնդեր կազմելու համար, որպէս զի այդպիսով ժողովրդին տալ և թնդանօթներ, սահմանադրութեան այդ այնքան կարևոր մասը: Այդ բանից ոչինչ չարւեց 1848 թւի դարնանը և ամառը, և դրանից յետոյ, պարոններ, միթէ կարելի է զարմանալ այն բանի համար, որ նոյեմբերին մարտի յեղափոխութիւնը զէրօ դարձաւ և առանց հետևանքի մնաց: Ի հարկէ, ոչ, և բէակցիան անհրաժեշտ հետևանք էր այն բանի, որ ոյժերի բէալական իրական փոխադարձ յարաբերութիւնների մէջ չէր արւած և ոչ մի փոփոխութիւն:

Թագաւորների մօտ անհամեմատ աւելի լաւ ծառայողներ կան, քան մեզ մօտ, պարոններ: Թագաւորների ծառաները այնպիսի դատարկամիտներ չեն, ինչպէս սովորաբար լինում են ժողովրդի ծառաները: Նրանք գործնական մարդիկ են, որոնք բնազդով հասկանում են, թէ ինչուին է գործի էութիւնը: Պարոն Քոն Մանտոյֆէլը վատ հռետոր էր: Բայց նա գործնական մարդ էր: 1848 թւի նոյեմբերին նա ցրելով

Ազգային ժողովը և թնդանօթները սարքելով փողոցներում, ամենից առաջ ի՞նչ արաւ նա: Չսկսեց կազմել մի յետադիմական սահմանադրութիւն:

Ինչպէս չէ: Նա գիտէր, որ այդ բանը ինքը միշտ կարող էր անել: 1848 թւի զեկտեմբերին նա հէնց ինքը ձեզ տւեց մի բաւական ազատամիտ գրաւոր սահմանադրութիւն: Ի՞նչն էր նրա առաջին միջոցը: Օ՛հ, դուք, ի հարկէ, յիշում էք. նա սկսեց քաղաքացիներին զինաթափ անելուց:

Մեր ուսումնասիրութեան սկզբում, պարոններ, մենք չափազանց դանդաղկոտ էինք. երբ ամենից առաջ սկսեցինք սահմանադրութեան գաղափարի որոշումով: Կարելի է, որ ձեզանից մի քանիսին այդ բանը չափազանց դանդաղ թւաց: Բայց դրա փոխարէն դուք տեսնում էք, որ հէնց որ մենք գտանք այդ հասկացողութիւնը, այն ժամանակ մեր առաջ մէկը միւսի յետեից երևան եկան աչքի ընկնող եզրակացութիւններ և այժմ մենք գիտենք, թէ ինչուին է կայանում գործի էութիւնը և այն էլ աւելի լաւ, աւելի պարզ և աւելի խոր, քան միւսները. բաւական չէ այդ, մինք եկանք այնպիսի եզրակացութիւնների, որոնք մեծ մասամբ բոլորովին հակառակ են այդ առարկայի մասին ընդհանուրի կողմից ընդունւած այն հասկացողութիւններին, որոնք ուղիղ են ճանաչւած հասարակական կարծիքի կողմից: Համառօտ կերպով քննութեան առնենք մի քանի այդպիսի եզրակացողութիւններ:

Ես արդէն ցոյց տւի, որ 1848 թւին ոչ մի կարևոր միջոց ձեռք չէին առել երկրում գոյութիւն ունեցող ոյժերի իրական փոխադարձ յարաբերութիւնները փոփոխելու և թագաւորի զօրքը ժողովրդական զօրք դարձնելու համար:

Ասենք մի առաջարկութիւն էր արւել, որ տաւում էր դէպի այդ նպատակը և հանդիսանում էր իբրև առաջին քայլը այդ ճանապարհի վրայ: Դա Շտայնի առաջարկութիւնն էր, որով նա մինիստրութեան ստիպում էր զօրքի վերաբերմամբ հրատարակել

մի հրաման, որը պէտք է նրա միջից հեռացնէր բոլոր յետադիմական սպաներին:

Բայց դուք յիշում էք, պարոններ, որ Բերլինի Ազգային ժողովը հազիւ էր ընդունել այդ առաջարկութիւնը, երբ ամբողջ բուրժուազիան և երկրի կէսը ազադակեցին. Ազգային ժողովը պէտք է կազմի սահմանադրութիւնը և ոչ թէ մինիստրութեան կեղտոտ հաշիւներէ հտեից ընկնի. նա չպէտք է ժամանակ կորցնի անհեթեթութիւնների համար և չպէտք է խառնուի գործադիր իշխանութեան գործերում. կազմեցէք սահմանադրութիւն, իմացէք, որ ձեր գործն է սահմանադրութիւն կազմելը, գոռում էին նրանք, կարծես թէ հրդեհի մէջ էին գտնուում:

Իսկ տեսնում էք, պարոններ, որ բուրժուազիան, իրկրի ամբողջ կէսը, որ ասում էր այդ բոլորը, սահմանադրութեան մասին չունէր ամենափոքր հասկացողութիւնն անգամ:

Իրաւոր սահմանադրութեան շարադրութիւնը ամենակարևոր գործն էր:

Հարկը պահանջած դէպքում այդ բանը կարելի էր երեք օրուայ ընթացքում անել, դա վերջին բանն էր, որի մասին պէտք էր մտածել. վաղաժամ արածը կլինէր մի անօդուտ գործ. կազմակերպել երկրի ոյժերի իսկական և իրական փոխադարձ յարաբերութիւնները, խառնուել գործադիր իշխանութեան մէջ, այնպէս խառնուել, և իրականապէս նրան այնպէս կազմակերպել, որպէս զի այդ իշխանութիւնը երբէք չկարողանայ անկախ կերպով դիմադրել ազգի կամքին— ահա թէ ինչու՞ն է կայանում հարցի ամբողջ էութիւնը, ահա թէ ինչ է հարկաւոր անել զբաւոր սահմանադրութեան հաստատման համար:

Եւ որովհետև Ազգային ժողովը չափազանց վաղ սկսեց զբաղել զբաւոր սահմանադրութեամբ, զբա համար էլ նրան ժամանակ չտուեցին մինչև անգամ վերջացնել սահմանադրութեան կազմելը և գործադիր իշխանութիւնը ցրեց այդ ժողովը դեռ ևս իր տրամա-

դրութեան տակ գտնուող գործիքների և ոյժի օգնութեամբ:

Երկրորդ եզրակացութիւն. ենթադրեցէք, որ չեն ցրել ազգային ժողովը և նրանց իսկապէս յաջողել է մշակել և հաստատել սահմանադրութիւնը:

Կփոփոխէ՞ր արդեօք, այդ բանը որևէ կերպ էականապէս իրերի ընթացքը:

Ոչ մի կերպ, պարոններ. դրան իբրև ապացոյց իրենք փաստերը: Չնայելով, որ Ազգային ժողովը ցրուեց, բայց թագաւորը, ժողովի թողած թղթերի հիման վրայ ինքը շարադրեց և 1848 թւի դեկտեմբերի 5-ին նրատարակեց սահմանադրութիւն, որ իր գլխաւոր կետերով նման էր այն սահմանադրութեան, որ մենք Ազգային ժողովից կարող էինք սպասել:

Այդ սահմանադրութիւնը չփաթաթեցին թագաւորի վզին, այլ նա հէնց ինքը հրատարակեց և կամաւոր կերպով տուեց հաշտութիւնից յետոյ: Ըստ երեւոյթին աւելի ևս հաստատուն պէտք է համարել այդ:

Ոչ, պարոններ, չէր կարելի: Աստուած փրկի: Եթէ ձեր այգում բնուած է մի խնձորենի և դուք նրա վրայ կախում մի եարլիկ հետևեալ խօսքերով. «սա թուղ է». միթէ ձեր խնձորենին թո՛ղ է դառնում: Ոչ, և եթէ նոյն իսկ ձեր բոլոր տնակիցները և ամբողջ թաղի բոլոր բնակիչները հաւաքէին և բարձրաձայն, ու հանդիսաւոր կերպով երդուէին և հաւատացնէին, որ դա թղենի է, այնուամենայնիւ ծառը միևնոյնը կը մնար և հետևեալ տարին ճշմարտութիւնը երևան կը գար, երբ վերոյիշեալ ծառի վրա կըմտէին խնձորենի և ոչ թէ թղեր:

Միևնոյնն էլ սահմանադրութեան վերաբերմամբ: Բոլորովին միևնոյն է, թէ թղթի վայ ինչ է գրուած, եթէ այդ գրուածը հակասում է երկրի բէալական դրութեան, ոյժերի իրական փոխադարձ յարաբերութիւններին: 1848 թուականի դեկտեմբերի 5-ին կամաւոր կերպով թղթի կտորի վրայ շատ զիջումներ արեց այդ բոլորն էլ հակասում էին իսկական սահմանադրութեան, ոյժերի բէալական և իրական փոխադարձ յարաբերութիւններին, որոնց դեռ չթույացած ժամանակ թագաւորը պահել էր իր ձեռքում: Դրա համար էլ իսկական սահմանադրութիւնը պէտք է քայլ առ քայլ կամ հետզհետէ բղխէր զբաւոր օրէնսդրութիւնից այն-

պիտի անհրաժեշտութեամբ, ինչպիսին պարունակուած է ձգողականութեան օրէնքի մէջ:

Եւ այդպէս, չնայելով որ վերաստուգիչ ժողովը ընդունել էր 1848 թւի դեկտեմբերի 5-ի սահմանադրութիւնը, այնուամենայնիւ թագաւորը ստիպւած եղաւ նրա մէջ մտցնել առաջին փոփոխութիւնը—1849 թւի շնորհած եռաստիճան ընտրողական օրէնքը: Ընտրողական օրէնքի շնորհիւ ծնւած պալատի օգնութեամբ սահմանադրութեան մէջ յետոյ մի քանի, չափազանց էական փոփոխութիւններ մտան, մինչև որ թագաւորը 1850 թւին երգւեց հաւատարիմ մնալու նրան և հենց որ երգւեց հաւատարիմ մնալու հէնց այդ ժամանակն էլ սկսեց իսկական կրկնաձևութիւնը: 1850 թւից ի վեր սահմանադրութիւնը ամեն տարի փոփոխութիւններ է ենթարկել: Որ և է դրօշակ, որ հարիւրաւոր ձևատարմաների ժամանակ պատերազմի դաշան է դուրս բերել, աւելի է պատառուտել և ծակծկել, քան մեր սահմանադրութիւնը:

Երրորդ եզրակացութիւն. ձեզ յայտնի է, որ մեր քաղաքում կայ մի կուսակցութիւն, որի օրգանն է «ժողովրդական լրագիրը»¹⁾, մի կուսակցութիւն, որ տենդային դողով կպել է այդ պատառուած դրօշակին, այդ այլանդակած սահմանադրութեան և դրա համար էլ ինքն իրան անուանում է «սահմանադրութեան հաւատարիմ կողմակից» և իբրև նշանաբան իր համանադրութիւնը, ի սէր Աստուծոյ, սահմանադրութիւն, կարաճւլ փրկեցէք, հրդէհ, այրւում է»:

Երբ դուք տեսնում էք մի կուսակցութիւն, նշանակութիւն չունի թէ երբ և որտեղ էք դուք տեսնում նրան, որը պատերազմական աղաղակի փոխարէն արձակում է տենդային ճիշդ՝ «պահէք սահմանադրութիւնը», ինչպիսի եզրակացութեան էք դուք գալիս, պարոններ: Ես չեմ հարցնում ձեր դիտաւորութիւնների և ցանկութիւնների մասին, ես զիմում եմ բացառապէս ձեր դատողութեան թէ, ինչպիսի եզրակացութեան էք հասնում դուք դրանից:

Առանց մարգարէ լինելու, այդ տեսարանը տեսնելով դուք կատարեալ համոզմունքով կասէք, որ այս սահմանադրութիւնը հասել է շնչասպառութեան. նա

1) «Volkszeitung»:

արդէն գրեթէ դիակ է. թող մի քանի տարի էլ անցնի և նրա մասին մենք միայն յիշողութիւն կունենանք:

Պատկերները ակներև են: Երբ գրաւոր սահմանադրութիւնը համապատասխանում է երկրի ոյժերի իրական փոխադարձ յարաբերութիւններին, այդպիսի ճիշդ երբէք չեն արձակուում: Այդպիսի սահմանադրութիւնն ոչ ոք չի համարձակել մօտենալ և դիպչել: Ոչ ոքի մտքով անգամ չի անցնիլ նրա հետ կուր բռնուել և եթէ որ և է մէկը վճռի այդպէս վարելու, այն ժամանակ նրա գործը վատ կլինի: Եթէ մի երկրի գրամանակ սահմանադրութիւնը համապատասխանում է ոյժերի բէայական-իրական փոխադարձ յարաբերութիւններին, այնտեղ անհնարին է այդօրինակ երևոյթը, այն ինքն որ մի որ և է կուսակցութիւն իր համար իբրև պատերազմական լողունգ ընտրի, «հաւատ պահեցէք սահմանադրութիւնը» խօսքերը: Երբ մի այդպիսի ճիշդ է արձակուում, այդ արդէն մի հաստատ և անկասկածելի նշան է, որ դա երկիրդ ճիշդ է, ուրիշ խօսքով դա ապացուցանում է, որ գրաւոր սահմանադրութեան մէջ մի բան կայ, որը հակասում է իսկական սահմանադրութեան՝ ոյժերի իրական փոխադարձ յարաբերութիւններին: Իսկ որտեղ այդպիսի հակասութիւն գոյութիւն ունի, այնտեղ էլ գրաւոր սահմանադրութիւնը անխուսափելի կերպով կորած է և ոչ մի Աստուած, ոչ մի աղաղակ չէ կարող նրան փրկել:

Սահմանադրութիւնը կարող է փոխել զէպի երկու միմեանց հակառակ կողմեր, այն է զէպի աջ, կամ զէպի ձախ, յամենայն դէպս չէ կարող կենդանի կամ մնալ: Իւրաքանչիւր բարեմիտ մարդու այդ ցոյց է տալիս նրա պահանջութեան համար արձակած աղատալիս նրա պահանջութեան կարող է փոխել է գալիները: Սահմանադրութիւնը կարող է փոխել է զէպի աջ, երբ այդ փոփոխութիւնները ձեռնարկում է կուսակցութիւնը, որպէս զի գրաւոր սահմանադրութիւնը համաձայնեցնի հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող կազմակերպւած ոյժի իրական պայմանադրութեան հետ: կամ առաջ կգայ հասարակութեան նազրութեան հետ: կամ առաջ կգայ հասարակութիւնը կազմակերպւած ոյժի վերաբերմամբ: Ս. յգլիսի զէպը սահմանադրութիւնը կփոփոխի և կծուի զէպի ձախ, ճիշտ այնպէս, ինչպէս որ առաջին զէպը սահմանադրութիւնը կծուի և թեքել էր զէպի աջ: Յամենայն դէպս նա կորած է:

Պարոններ, եթէ դուք ոչ միայն յիշէք և նուրբ կերպով մտածէք այն ճառի մասին, որը պատիւ ունեցայ ձեր առաջ արտասանելու, այլ և դուրս կրերէք նրանից հետեոյ բոլոր եզրակացութիւնները, այն ժամանակ դուք ձեռք կրերէք սահմանադրական ամբողջ արուեստը և իմաստութիւնը:

Սահմանադրական հարցերը ամենից առաջ ոյժի և ոչ թէ իրաւունքի հարցեր են. որեւէ երկրի իսկական սահմանադրութիւնը կայանում է այդ երկրում գոյութիւն ունեցող ոյժերի ղեկավար-իրական փոխադարձ յարաբերութիւնների մէջ. դրանք սահմանադրութիւնը միայն այն ժամանակ ունի նշանակութիւն եւ հաստատուն է, երբ ներկայացնում է որեւէ հասարակութեան ոյժերի իսկական փոխադարձ յարաբերութիւնների ճիշտ արտայայտութիւնը, ահա այն սկզբունքները, որը դուք պէտք է պիտի պահէք: Այսօր եւ ձեզ բացատրեցի այդ սկզբունքները, լուսաբանելով նրանց միայն վիճակական ոյժի տեսակէտից, որովհետեւ, առաջին, որ ժամանակը թոյլ չէր տալիս այդ հարցը ուրիշ տեսակէտներով էլ պարզաբանելու և երկրորդ, որովհետեւ զօրքը խաղում է ամենակարեւոր և վճռողական դերը, երբ խօսքը վերաբերում է կազմակերպւած ոյժին: Բայց դուք հասկանում էք, որ այդ միեւնոյնը վերաբերում է նաև արդարադատութեան ծառայողներին, աստիճանաւորներին, վարչութեան և այն կազմակերպութիւններին. այդ բոլորը նոյնպէս կազմում են հասարակութեան կազմակերպւած ոյժի միջոցները: Լաւ յիշեցէք այս ճառը. եթէ երբ և իցէ ձեզ վիճակի կազմելու սահմանադրութիւն, այն ժամանակ, պարոններ, իմացէք, թէ ինչպէս պէտք է վարւել. խմայէք, որ այդ գործը թուղթ գրելու մէջը չէ կայանում, այլ ոյժերի իրական փոխադարձ յարաբերութիւնները փոփոխելու մէջ:

Առ այժմ այդ դառախօտութեան շնորհիւ, պարոններ, դուք ինքներդ կհասկանաք, առանց իմ կողմից ամենափոքր ցուցմունքի անգամ, թէ ինչ կարիքներից ստիպւած կառավարութիւնը առաջարկել է ներկայ վիճակական ղեկավարները և կըմբռնէր կառավարութեան՝ զօրքը մեծացնելու պահանջը:

Պարոններ, միապետութեան ծառայողները գործնական մարդիկ են և ոչ թէ լուսավարներ և թոյլ տուէք ինձ այդպիսի գործարարներին զանկանալու և ձեզ համար:



0 691
870

« Ազգային գրադարան



NL0219126

39.512

